



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական
կենտրոնի խորհրդի 02.05.2013 թ. № 4-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
«ՕԻԾԵՌՆԱԿ-8» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(AMICUS CURIAE)**

№ 04-13-Ա

ք.Երևան

02.05.2013 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Ջոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Ջեյնալյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Օժժեռնակ-8» ՄՊ ընկերության դիմումի հիման վրա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

Հարցի կարևորությունը.

Սույն սահմանադրական գործով դիմողը առաջ է բերել մի շարք իրավական նորմերի հակասահմանադրականության թեզեր:

Դիմողի կողմից բարձրացված խնդիրները կարևոր դերակատարություն ունեն դատարանի մատչելիության, արդարացի հավասարակշռության, իրավական որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների իրացման, ինչպես նաև անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու առումով:

Այս առումով Մարդու իրավունքների և հիմարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի անդամ պետությունների վրա պոզիտիվ պարտավորություն է դրվել՝ ապահովելու այդ իրավունքների անշեղ իրականացումը:

Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).

Սույն միջամտության շրջանակում Կենտրոնն առանձին անդրադարձ է կատարելու դիմողի կողմից վիճարկվող և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունած հետևյալ իրավադրույթներին.

ա/ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մաս.

բ/ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մաս.

գ/ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներ.

դ/ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդված.

Վիճարկվող նորմի մեկնաբանությունը.

Կենտրոնը հարկ է համարում նշված իրավադրույթներից յուրաքանչյուրին առանձին անդրադարձ կտարել:

* * *

***ա/ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի
118.7-րդ հոդվածի 2-րդ մաս.***

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ «Վճարելի բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 118.7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «2. Վճարելի բողոքը վերադարձնելու մասին վճարելի դատարանը կայացնում է որոշում՝ գործը

վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված:»¹

Սույն սահմանադրական գործով վիճարկվող նորմից կարևորվում է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանված լինելու հանգամանքը:

Անդարադարձ կատարելով դատական ակտի պատճառաբանմանը, հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում հստակ դիրքորոշում է հայտնել այդ կապակցությամբ:

Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանը 09.04.2007թ. թիվ ՄԴՈ-690 որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի² 2-րդ կետը (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ).... բ) վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով, ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6 (1-ին և 2-րդ մասեր), 18 (1-ին մաս) և 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Նույն որոշմամբ սահմանադրական դատարանը գտել է, որ *ՀՀ վճռաբեկ դատարանի խնդիրը չէ քննության ընդունել ցանկացած բողոք, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան պարզել ու գնահատել բողոքատու անձանց փաստարկների բնույթը, իրավական նշանակությունը և կայացնել պատճառաբանված որոշում:*

Ընդ որում՝ այստեղ սահմանադրական դատարանը պատճառաբանված որոշում կայացնելու առումով որևէ բացառություն կամ որևէ չափանիշ չի արձանագրել, ինչը նշանակում է, որ պատճառաբանված լինելու հատկանիշը վերաբերվում է բացառապես բոլոր դատական ակտերին (թե՛ միջանկյալ, և թե՛ գործն ըստ էության լուծող):

Անդրադարձ կատարելով վճռաբեկ վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակին սահմանադրական դատարանն արձանագրել է. *«Վճռաբեկ*

¹ Նշված իրավանորմը, ինչպես նաև՝ վարույթը վճռաբեկ դատարանում սահմանող 20-րդ գլուխն ամբողջությամբ Օրենսգրքում լրացվել են 28.10.10թ. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-135-Ն ՀՀ օրենքով:

² Վճռաբեկ բողոքը վերադարձնելը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքում՝ հոդված 233:

վարույթում բողոքարկման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը պետք է լինի ոչ միայն վճարել բողոքի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելը, այլև բողոքը վերադարձնելու պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Դրա բացակայության հետևանք է, որ գործով ուսումնասիրված՝ վճարել դատարանի թե՛ վճարել բողոքը վարույթ ընդունելու և թե՛ վերադարձնելու մասին որոշումներում ըստ էության չեն տրվում պատճառաբանություններ:»:

Վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման անդրադառնալիս սահմանադրական դատարանը նշել է, որ ատանց այդպիսի որոշման պատճառաբանման նորմատիվ պահանջի չի կարող բավարարել արդարացի հավասարակշռության, որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների պայմանները:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճարել դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճարել բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

Չնայած վերոնշյալ որոշմամբ վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանվածության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշմանը, Կենտրոնը մտահոգություն է հայտնում այն կապակցությամբ, որ այդուհանդերձ, իրավակիրառ պրակտիկայում թե՛ վարչական և թե՛ քաղաքացիական դատավարական օրենսգրքերում ամրագրված իրավադրույթները (վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման մասով) շարունակում են կիրառվել «հակասահմանադրական» բովանդակությամբ: Այլ կերպ ասած՝ գործնականում կա այն խնդիրը, որ վճարել բողոքը վերադարձնելու մասին որոշումները չեն պատճառաբանվում, և բողոքները վերադարձվում են տիպային դարձած այնպիսի ձևակերպումներով, ինչպիսին օգտագործվել է սույն գործով դիմողի պարագայում. «... Տվյալ դեպքում բողոք բերած անձը, խախտելով նշված

հողվածի պահանջները³, վճարելի բողոքում չի հիմնավորել նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտման առկայությունը:»⁴:

Հատկանշական է այն հանգամանքը, որ պատճառաբանված դատական ակտ կայացնելու պայմանը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածում ուղղակիորեն նախատեսված չէ: Այն դուրս է բերվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից՝ վերջինիս նախադեպային իրավունքում: Նույնը կարելի է ասել նաև ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի վերաբերյալ, որում նույնպես դատական ակտերի պատճառաբանման պահանջն ամրագրված չէ:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ ***դատարանները պետք է բավարար հստակությամբ հիշատակեն այն փաստարկները, որոնք ընկած են իրենց որոշումների հիմքում***⁵:

Վերոգրյալից հետևում է այն հանգամանքը, որ ամեն պարագայում անձի կողմից պետության դատական համակարգի մեջ մտնող որևէ դատական ատյանին ուղղված իրավունքի պաշտպանության վերաբերյալ հայցի (դիմումի) կամ բողոքի առնչությամբ պետք է իրականացվի գործի ըստ էության քննություն և կայացվի ***պատճառաբանված դատական ակտ***, քանի որ միայն այդ պարագայում կարելի է խոսել արդարադատության մասին:

* * *

բ/ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ.

Դիմողի կողմից բարձրացվել է նաև ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականության հարց: Համաձայն նշված նորմի՝ *1. Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմանակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, երբ՝ 1) դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ:*

³ Այստեղ խոսքը գնում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ: *Հղումը մերն է:*

⁴ Տես՝ թիվ ՎԳ/0676/05/08 վարչական գործով Հայաստանի Հանրապետության Վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 21.03.2012թ. որոշումը:

⁵ Տես՝ Հաջիանաստասիուն ընդդեմ Հունաստանի, 16.12.1992թ., կետ 33, Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի, 21.01.1999թ., կետ 26:

Դիմողի համոզմամբ նշված իրավական նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին, որը երաշխավորում է անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքը:

Այստեղ հարկ ենք համարում արձանագրել, որ չնայած այն հանգամանքի, որ դիմողի կողմից բարձրացվել է ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականության հարց, այդուհանդերձ, դիմողի փաստարկները վերաբերում են նույն հոդվածում ամրագրված մեկ այլ իրավական նորմի բովանդակությանը: Այսպես, դիմողն իր գործով որպես դատական օրենսգրքի խախտում է որակում այն հանգամանքը, որ նույն դատավորը մասնակցել է նույն գործի քննությանը ՀՀ վարչական դատարանում (կայացրել է դիմողի հայցը մերժող դատական ակտ), իսկ հետագայում մասնակցել է նաև նույն գործի քննությանը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում:

Կենտրոնի խորհուրդը գտնում է, որ տվյալ հարաբերության նկատմամբ կիրառել էր ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի առաջին նախադասությամբ նախատեսված իրավական նորմը համաձայն որի՝ *... ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, ... երբ՝ դատավորը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է տվյալ գործի քննությանը ստորին աստիճանում՝ որպես դատավոր կամ գործին մասնակցող անձ:*...

Կենտրոնի համոզմամբ նշված իրավական նորմն արդարացիորեն տվյալ գործի քննությանը ստորին աստիճանում դատավորի մասնակցության հանգամանքն ինքնաբացարկի հիմք է դիտում, քանի որ նման դեպքերում դատավորի մոտ կարող է վիճող կողմերից որևէ մեկի նկատմամբ նախատրամադրվածություն առաջանալ:

Ամփոփելով վերոգրյալը, Կենտրոնի խորհուրդը վիճարկվող իրավադրույթի առումով տեսնում է ոչ թե բուն իրավանորմի սահմանադրականության խնդիր, այլ դատական սխալ, որը սահմանադրաիրավական քննության ենթակա չէ:

**զ/ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի
4-րդ և 5-րդ հոդվածներ, դ/ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդված.**

Սույն սահմանադրական գործով դիմողը բարձրացրել է նաև «Պետական

ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածների, ինչպես նաև՝ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի սահմանադրականության խնդիր, և վերլուծելով սույն գործով ՀՀ վարչական դատարանի կողմից տրված մեկնաբանությունը գտել է, որ նշված իրավանորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 8-րդ և 31-րդ հոդվածներին, այնքանով, որքանով կառավարությանը հնարավորություն են տալիս մասնավորեցված օբյեկտի շենք շինություններով զբաղեցված և օգտագործվող հողամասը վարձակալության ու գնման նախապատվության իրավունքով տրամադրել նաև մեկ այլ առևտրային կազմակերպության:

Կենտրոնի համոզմամբ խնդրո առարկա հարցն անհրաժեշտ է քննարկել սեփականության իրավունքի համատեքստում: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

Նշված սահմանադրական նորմն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, որի 163-րդ հոդվածը սեփականության իրավունքը դիտում է որպես սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունք՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Նույն հոդվածով տրվում է նաև սեփականության իրավունքի ամենակարևոր տարրերից մեկի՝ տնօրինման իրավունքի սահմանումը, համաձայն որի՝ տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Նշված իրավական նորմերի բովանդակությունը համադրելով սույն գործի հետ, կարելի է փաստել, որ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող ցանկացած սուբյեկտի, այդ թվում՝ պետության սահմանադրական իրավագործությունն է գույքն իր հայեցողությամբ տնօրինելը, այսինքն՝ դրա իրավական ճակատագիրը որոշելը, որը կարող է իրականացվել օրենքով նախատեսված, ինչպես նաև օրենքով չնախատեսված, բայց օրենքին չհակասող գործարքներ կնքելու միջոցով:

Եզրակացությունը.

Ամփոփելով քննարկվող իրավական նորմերի սահմանադրականության հարցը, Կենտրոնն արձանագրում է, որ վիճարկվող նորմերը սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Այդուհանդերձ, Կենտրոնը ցանկանում է ընդգծել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի անդամ պետությունների վրա պոզիտիվ

պարտավորություն է դրվել՝ ապահովելու Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների անշեղ իրականացումը: Այդ պարտավորությունն առաջին հերթին հնարավոր է կատարել դատարանի մատչելիության, իրավական որոշակիության, իրավահավասարության և իրավունքի գերակայության իրավական սկզբունքների իրացման, ինչպես նաև անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու միջոցով:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան